



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 հունիսի 2019 թվականի թիվ 65-Ա
ք. Երևան

«ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՄՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՄՊ ընկերության ոչ սեփական հեռուստաձայնային վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի հունիսի 13-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Բավարարել «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՄՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստաձայնային վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստաձայնային վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հեռուստաձրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«РБК» «Рен ТВ» «Mezzo Live HD» «Bridge TV» «Bollywood» «English Club TV» «Tiji»	31.12.2019թ.
«Ար»	անժամկետ
«Paramount Comedy» «Spike» «MTV Live HD» «Nickelodeon» «Nickelodeon Jr»	անժամկետ